ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026 թվականի հունվարի 22-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն
Ընթացակարգի ծածկագիրը ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-01/26

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ կարիքների համար Ըմպելու ջրի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-01/26 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 22.01.2026թ. ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 22.01.2026թ. տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1

Հարգելի գործընկերներ,

Հայտարարված ընթացակարգի 1-ին չափաբանում տեխնիկական բնութագրում առկա է հետևյալ ձևակերպումը:

Խմելու աղբյուրի ջուր լրացուցիչ մաքրման փուլ անցած, ենթակա է կոշտ մաքրման, ածխային ֆիլտրով և ավելի նուրբ ֆիլտրով մաքրված, ախտահանված է ուլտրամանուշակագույն ճառագայթներով:

Ունի հոսքագծային շշալցում, համապատասխանում է ԵԱՏՄ ՏԿ 044/2017 տեխնիկական կանոնակարգին: Ջրի մատակարարումը պետք է կատարվի 19լ տարողությամբ պոլիկարբոնատից պատրաստված բռնակով շրջանառելի տարաներով: Անվաճար պետք է տրամադրվեն ջրի դիսպենսերներ՝ 23 հատ Ընկերության սան մաքրման գործառույթներ իրականացնող աշխատակիցների կողմից դիսպենսերների սան. մաքրում՝ 6 ամիսը մեկ անգամ:

2-րդ չափաբանում տեխնիկական բնութագրում առկա է հետևյալ ձևակերպումը:

Խմելու աղբյուրի ջուր լրացուցիչ մաքրման փուլ անցած, ենթակա է կոշտ մաքրման, ածխային ֆիլտրով և ավելի նուրբ ֆիլտրով մաքրված, ախտահանված է ուլտրամանուշակագույն ճառագայթներով: 5լ տարողությամբ պլաստիկից պատրաստված բռնակով շրջանառելի տարաներով:

Խնդրում ենք պարզաբանել, եթե մատակարարվող ապրանքը համապատասխանում է վերը նշված ֆիլտրացման պահանջներին, շշին վերաբերող պահանջներին և մատակարարվող ջուրն ունի աղբյուրի ծագում, սակայն մակնշվում է որպես խմելու ջուր համաձայն գործող տեխնիկական կանոնակարգի պահանջների, արդյոք հնարավոր է մասնակցությունը սույն չափաբաժնի շրջանակներում: Կանխավ շնորհակալություն:

Պարզաբանում N 1

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ համար ընդունելի է խմելու ջրի մատակարարումը, որն ունի աղբյուրի ծագում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-01/26 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Մարիամ Եսայանին: Հեռախոս՝ 010292929 303, Էլեկտրանային փոստ՝ mariam.yesayan@armats.am

Հանձնաժողովի նախագահ՝

Հ. Ղազարյան

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝

Ա. Քալոյան

Գ. Մանուչարյան

Հանձնաժողովի բացող անդամներ՝

Լ. Մուսախանյան

Լ. Յաղջյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Մ. Եսայան